Քաղաքացիական գործ ԵԴ2/0407/02/24

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5-ը փետրվարի 2024թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով ԱՁ Ջանիկ Սևոյանի հայցադիմումն ընդդեմ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և ԱՁ Ջանիկ Սևոյանի միջև 11.07.2023թ. կնքված թիվ «ՄՊՀ-ԳՀԾՁԲ-23/31» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը ներկայացվել և դատավոր Ա.Մկրտչյանին է մակագրվել 22.01.2024թ., դատավորի աշխատակազմին է հանձնվել 25.01.2024թ.:

Դատարանի 29.01.2024թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումը կրկին ներկայացվել և դատավոր Արամ Մկրտչյանի աշխատակազմին է հանձնվել 02.02.2024թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.5-րդ, 234.6-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ, հայցադիմումի ներկայացման օր համարել 22.01.2024թ.:

Եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2024թ. մարտի 15-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել 11.07.2023թ. կնքված թիվ «ՄՊՀ-ԳՀԾՁԲ-23/31» ծածկագրով գնման ընթացակարգի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ **Ա. ՄԿՐՏՉՅԱՆ**